

Պ Ե Տ Մ Ա Գ Ի Տ Ւ Կ Ա Ն

Ե.

ԹՈՍՏԱԿԻ=ԳԵՐԻԱԾՈՅ

Ռոստակ անուան ընթերցուածներ. Ռոստակը Պարսկահայքի Հեր և Զարեանդ գաւառների հիւսիսային սահմանակից երկրի մասը չէ կարող լինել, այլ գանւում է աւելի հարաւ Ռոմիոյ կողմերը, մանաւանդ ըստ Յայսմաւուրքի վկայութեան: Ռոստակ=Գաւառ. երկու անուններով ևս գաւառներ Հայաստանի հիւսիսում և հարաւում. հիւսիսարևելեան և հարաւարևելեան Հայաստանի հնագոյն կտակակցութեան այլ արձագանգներ: Ռոստակ=գաւառը թերեւ Փոքր-Աղբակն է:

«Եպիսկոպոսութիւն Ռոտոկաց» (ՅՊՄ, Էջ 53), «— Ռոտակաց» (ՅՊԵա, Էջ 66, ՅՊԵր, ի, Էջ 119), «— Ռոտկաց» (ՅՊԵր, ի, 119 V.), «Գաւառն Ռոտոկայ», V «— Ռոտոկաց» (ՅՊՄ, Էջ 88, 207, այլ և ՅՊԵա, Էջ 114 և ՅՊԵր, ԱԱ, Էջ 200), «Ռոտկայ գաւառ» (ՅՊՄ, Էջ 158 և ՅՊԵա, Էջ 210), «Ռոտկաց գաւառ» (ՅՊԵր, ԾԵ, Էջ 363). «Նահանգս Ռոտկաց» (ՅՊՄ, Էջ 178, ՅՊԵա, Էջ 239, ԿԵ, Էջ 413). «Աշխարհ Ռոտակաց» (ՅՊՄ, Էջ 134, ՅՊԵա, Էջ 177). «— Ռոտկաց», V. «— Ռոտականաց» (ՅՊԵր, ԾԱ, 308): Հետաքրքրական է, որ Խաչիկ ծայրագոյն վարդապետի ՅՊԵա-ի հետ համեմատած Մայր Աթոռի տասնուշորս ձեռագրերից

1. Այս անունը տարբեր ընթերցուածներով շատ անգամ յիշում է Յովհաննէս կաթուղիկոս պատմաբանը, սորա առաջին տպագրութիւնն եղել է Երուսաղէմում 1843-ին, որ նշանակում ենք ՅՊԵա տառերով. երկրորդը Մոսկովյայում 1853-ին Մ. Էմինի ձեռքով=ՅՊՄ. իսկ վերջին երրորդ տպագրութիւնը կրկին Երուսաղէմում 1867-ին=ՅՊԵր:— Մեր վկայութիւնները կը բերենք այս վերջին տպագրութիւնից առանց ամեն անգամ միւս տպագրութեանց ընթերցուածները առանձնապէս յիշելու, քանի որ հենց սկզբում այդ դնում ենք:

լնթերցուածքներ տուող ԳԵԶԼԻԹ (= Կարինեան ցուցակ № 1690, 623, 1109 և 622. իսկ Զ և Թ Խաչիկ վարդապետի սեփական) նոր լնթերցուածք չեն տալիս բացի Ը-ից, որ ունի «աստկայ», ուր մեր ելեք տպագիրներն ունին «Ռոստկայ». ինչպէս որ «Ռոստկա» ունի հենց նոյն տեղում և ձեռագիր Ա=1693 Կարինեան ցուցակի Բաղէշի օրինակը, գրուած 1689 թուականին, որից և ըստ Գալուստ Տէր-Մկրտչեանի արտագրուած են Համարեա բոլոր միւս ձեռագրերը: Մ. Կաղանկատուացին ևս ունի «Ռոստկայ, Ռոտակաց եպիսկոպոս» (Գ, Բ, Էջ 20. Փարիզ 1860. և Գ, Բ, Էջ 240. Մոսկվա 1860). իսկ Դեռնդ պատմագիրն ունի «Բուտակս» (ԼԲ, Էջ 134, Ա. Պետերբուրգ 1887), որ Հիւրշմանն ուղղում է «Ռոտակ»: իսկ ըստ մեզ ուղիղ է և «Բուտակս» ձեր, որ տալիս է այս տեղ մի այլ ձեռագիր, մանաւանդ, որ կայ և Երուտակ տարբերակը: Այս գաւառն է անշուշտ իրեւ թէ Լուսաւորչից «կարգուած» Երեսուն «աթոռակալ» և «աթոռնկալ» եպիսկոպոսական «գահ» երից «քսան» և երեքն՝ Երուտակաց»:

1. Ռէխտանէս եպս. Պատմ. Հայոց Ա, Բ, Էջ 100, Վաղարշապատ 1871: Նախ այս ցանկի «Երեսունն՝ Միւսաւորիաց=Միւս Ասորիաց», քանի որ քիչ վերև ունի. «Բսան և չորսն՝ Ասորիաց», ինչպէս որ իրօք ունի Ռէխտանէսի և մի այլ ձեռագիր «le manuscrit du Musée asiatique de l'Académie» ըստ թարգմանութեան M. Brosset-ի (Deux historiens Arméniens Kitagos de Ganzac, Oukhtanes d'Ourha Էջ 269. Sr. Pétersbourg, 1870): Ապա ըստ այսմ Արարատ ամսագրի 1905 թուականի (Էջ 551—559) «Պատմ. Աստուածընկալ Ա. Նշանին Ա. Աղբերկու» ցանկի «Ի՞ն. Երստակայ=Երստակաց»: Այս «կոնդակի» «գահակալ աթոռները» և «գահ» երը միենոյն են, ինչ որ Ռէխտանէսինը, միայն աղաւաղումներով, ետևառաջութիւններով և սխալմամբ կատարուած յաւելումով Նախ և առաջ դուրս պէտք է քցել լ.Ա., իսկ «Լ. Միւս Ասորոց»=Միւս Ասորոց. ըստ այսմ «Ի՞ն. Ասորոցն»=Ասորոց, ինչպէս որ ունի և Ռէխտանէսը. այսպէս էլ «Ի՞ն. Միւս Ասորոց»=Ելոյ, «Ի՞ն. Զարեվանից»=Զարեհանից կամ de Sahrévan, այն է Զարեհաւան—Զարեանդ. իսկ «ԻԱ, Եւմիակէոյ»=Քսան և մի (ԻԱ) Ակէոյ և «ԻԲ. Բղնունիաց»=Բաժունեաց», մանաւանդ որ «կոնդակին» ունի ևս «ԺԳ. Բզնունեաց»: Այս «կոնդակին», մի կեղծիք, դուցէ Գրիգոր Աղ-

ՄԵՆՔ տեսնում ենք, որ այս միենոյն երկիրը հաւառաբոր կերպով կոչւում է գաւառ, նահանգ և աշխարհ, ճիշտ ինչպէս մեր դասական եւ գարու հեղինակները: մասնաւանդ Փաւատոս Բուզանդացին, անխտիլ գործ են ածում այդ հօմանիշ բառերը: Հ. Հիւրշմանը՝ հիմուելով Ղեռնդի և Յովհաննէս պատմաբանի ցուցմունքների վրայ այդ երկիրը զնում է, Պարսկահայքում ասելով. «Այս նահանգի մի մասը, որտեղ էին Հեր և Զարաւանդ գաւառները, Հիւսիսային սահմանակից երկրի հետ միասին երեւում է Ը. և Ժ. գարում Ռոտակ անունով»¹:

Հիւրշմանի ասածին մենք չենք կարող համաձայնել, ուստի աշխատենք որոշել այս երկրի դիրքը նախ հենց Հիւրշմանին յայտնի վկայութիւններով: Ղեռնդ պատմադրի այն խօսքը, թէ Գաղիկ Արծրունին նկան ամրոցից ելնելով «Ասպատակս սփոհը զկողմամբք Ատրպատական տշխարհին, ի Զարեանդ գաւառ, ի Բուտակս (Վ. ի Բուտակս) և Զիգուոյ, ի Տասուկ, ի Գաղնակ (= Գանզակ = Գանձակ), ի Ցորմի, ի Սուրենապատ . . . և գայլ հասանէր ի գաւառն Հեր»² շատ անորոշ է, որից նոյն իսկ զժուար է կռահել, թէ Բուտակս Արմիոյ լճի որ կողմն է: Համարեա սիենոյնը կարելի է ասել Յ. պատմաբանի այն վկայութեան մասին, թէ Սմբատ Ա. Բագրատունին Ատրպատականի ոստիկան Ափշինի գէմ կռուելիս «Գնայր ընդառաջ նորա մինչև ի գաւառն Ռոտոկաց, մերձ յԱտրպատական» (ՅՊԵԲ, I. Ա., էջ 200): Ատրպատականը մեծ և ընդարձակ երկիր է Հայաստանի արևելեան սահմանի երկարութեամբ մինչև Հարաւուստի և դարձեալ անորոշ է մնում մեր վինտուած երկրի տեղը:

Միենոյն պատմադրի երկու այլ վկայութեամբ հնարաւոր է աւելի ճիշտ մօտենալ խնդրին: Գաղիկ Արծրունին

թամարցու, յոյս ունինք այլ ուրեք վերադառնալու: Բացի վերոցիշեալ ընթերցուածքներից կայ և «Բռոստակ» տարրերակը, որ ունի Մ. Կաղանկայտուացին (Բ, իթ, 163. Մոսկուա 1860):

1. Die altarmenischen Ortsnamen, էջ 260.

2. Ղ. Պատմ. Ա.Բ., էջ 133—134. Ա. Պիտերբուրգ 1887:

իւր Գուրգեն եղբօր հետ կոխւներ են մզում Ատրպատականի Յուսուփի ամիրապետի դեմ ստէպ ստէպ «Առ ստորոտով աշխարհին Կորդոց (Վ. Կորդուաց) և Ռոտկաց (Վ. Ռոտականաց) և Ատրպատականի» (ՅՊԵՐ, ծա, էջ 308, ՅՊՄ, էջ 134 և 211): Այստեղից կարելի է ուրեմն հետեցնել, որ այս երկիրը գտնուում էր Կորդոց և կամ Կորդուաց աշխարհի և Ատրպատականի միջև, Հայաստանի արևելեան հարաւային սահմանների մօտ. մանաւանդ որ Վասպուքականի և Պարսկահայքի դէպի հիւսիս տարածուած գաւառներն ընդհանրապէս յայտնի են: Այժմ արդեն հասկանալի պիտի լինի միւս վկայութիւնը: Յուսուփը դուրս գալով Դուինից՝ զիմում է Մարդաստան և Տոսր գաւառները Պաղիկ Արծրունու դէմ: «Ապա անցեալ թողեալ ի բաց զնացեալ երթային զնացւոյին կողմամբքն Խոտելաց գաւառին ի Հեր և ի Սաղամաս և անտի ի քաղաք Ատրպատականի» (ՅՊԵՐ, ծե, 363): Եւ որովհետեւ յայտնի է Սալիմաստի և Հերի տեղը¹, ուստի եթէ Ռոտկաց գաւառը համարենք հիւսիսում, ըստ Հիւրշմանի, այն ժամանակ պէտք է իրաւամբ «Հարաւային» բառի առաջ հարցական դնենք և «զհարաւային կողմամբքն» թարգմանենք ըստ Հիւրշմանի «In die südlichen (?) Gegenden»². առկայն ի զուր է պնտում Հիւրշմանը իւր թարգմանութեան վրայ, քանի որ այդ միմիայն նշանակում է «Հարաւային կողմեռով»=«Um die südlichen Gegenden»: Եւ խնդիրը պարզ է. Արարացիք իջել են աւելի հարաւ և Ռոտկաց գաւառի հարաւային կողմեռով բարձրացել են հաւանօրէն այլ ճառնապարհով աւելի հիւսիս դէպի Հեր և Սաղամաս: Ճիշտ հակառակ ընթացքը տեղի ունի մի այլ դէպում: Յուսուփը Բարելոն քաղաքից դուրս գալով անցնում է Ասորոց Միջագետքով, հասնում է «յաշխարհն Կորդուաց» և մի քանի օր մնալով «ի սահմանս Կորդուաց», մեկնում է, հասնում և բանակում «յաշխարհն Անձնացեաց»: Ապա «Չուէ գնայ

1. Die alarmen. Օրտական, էջ 338:

2. Անդ, էջ 261:

ընդ կողմին լերինն Ականեաց, ի գաւառն Աղքակայ» և Գաղիկ Արծրունուց հարկեր առնելով՝ «Զուէ յուղի անկեալ զնայ զկողմամբ Հերոյ և Զարեանդ գաւառի ի նահանգս Ռոտկաց» (ՅՊԵՐ, կե. էջ 413): Այս տեղ Յուսուփը հարաւից՝ Կորդուաց աշխարհից բարձրանում է հիւսիսարեելք՝ Անձաւացիք, ապա սակաւ ինչ ես հիւսիսարեելք՝ Աղբակ, անատարակոյս Մեծ Աղբակը, և գարճեալ հիւսիսարեելք՝ Հեր և Զարեանդի կողմերով իջնում է հարաւ «ի նահանգս Ռոտկաց», ուր երեխ Յովհաննէս կաթուղիկոսը գրում էր իւր սկատմութիւնը և կամ թերես սա էլ ուրիշ հայ եպիսկոպոսների պես այդտեղ առաջնորդ է եղել, ինչպէս Սահակ Զորափորեցին «Նախ կարգեալ էր յեպիսկոպոսութիւն Ռոտակաց», Վ.— Ռոտկաց (ՅՊԵՐ, ի. էջ 118—119): Սորա յաջորդ Եղիա Արճիշեցու ժամանակ ես յիշւում է «Սարդիս Ռոտակաց»—«Ռոտակաց եպիսկոպոս»¹, և Մանազկերտի ժողովում 726. ին Եղիայի յաջորդ Յովհաննէս Օձնեցու ժամանակ «Գորգի Բոտակաց» եպիսկոպոս²:

Յայսմաւուրքի վկայութեամբ արդէն, որ գմբախտաբար անծանօթ է մնացել Հիւրշմանին, հաստատւում է մեր կարծիքը. «Յայսմաւուրու տէր Իորայէլի փետր. 16. ի վարս յուղայի յակորեան զրի վասն նորա. «Գնաց ի յՈրմի քաղաք հայոց, և անդ կատարեաց զընթացս իւր... և անդէն թաղեցաւ»: Եւ վասն սիմոնի եղբօր յուղայի զրի անդ. «Կատարեցաւ յըռուսթաւա՝ մտեալ ի վիճակ եղբօր իւրոյ» (յուղայի որ յՈրմի կատարեցաւ): Զայս տեղի՝ այլ օրինակը յայսմաւ. զնեն ի թիկանց որմեայ, զոր օրինակ ի յուն. 30 զրի վասն սիմոնի կանանացւոյն. «Կատարեցաւ ի քաղաքն յՈրուսթա՝ որ ի թիկանց յՈրմոյ կայ», իսկ ի փետր. 16 ասի վասն շմաւոնի՝ որ է նա ինքն սիմոն.

1. Մ. Կաղանկայտուացի հատոր Բ, Ը, էջ 20, Փար/դ 1860. և Գ, Ը, էջ 240, Մոսկվա 1860:

2. Երուանդ վ. Տէր-Մինասեանց, Հայոց եկեղեցու յարաբերութիւնները Ասորւոց եկեղեցիների հետ. Գ, էջ 193. Ս. Էջմիածին 1908. Հմմտ. Ն. Ակինեան, Հանդէս Ամսօրեայ 1905, էջ 216, 368. Վիեննա:

«Քարողեաց զքրիստոս ի քաղաքու և ի զիւզու և ի գաւառու հայոց և մարաց և ասորւոց, և կատարեցաւ յլուսթայ որ ի թիկանց Որմինդ կայ, և անդ թաղեցաւ»¹: Հանգուցեալ Սբգար Յովհաննիսեանի մեղ մօտ գտնուած ո. Էջմիածնի մատենադարսնին պատկանելիք մի ձեռագրում ևս յիշ-ւում է «Ըստալոյա» Որմի քաղաքի մօտ²: Անտարակոյս «Որմոյ, Որմոյն» Որմի քաղաքն է, ինչպէս որ Ինձիճեանի վերնադրից էլ երեւում է: Ինչ վերաբերում է Ռուսթա, Ռուսթաւած քաղաքին կամ վիճակին, մօտ են մեր միակ Ռոստկոյ ձեին:

Եւ իրօք Որմիոյ թիկունքի՝ արևմտեան կողմը կայ մի այդպիսի գաւառու. «Զարզարի քուրդերը... S'ihab al-din al-Umari-ի ժամանակ [ԺԴ. դարում] բնակւում էին ամենաբարձր ալպեան շղթայ Քանդիլանի այն կողմը Լաշիջան գաւառում և զեռ Ռւշնուի [Աշուկի ասորւոց] կողմերում Զերզա անունով. բայց բացի այդ դարձեալ դեռ ալ-Umari-ի կենդանութեան ժամանակ Բերազգիրդ և al-Bustaq վիճակ-ներում՝ Ռաւանդուզից հիւսիս»³: Ապա Գ. Հովմանը Ռուստակ անուան տակ հետևեալ ծանօթութիւնն է զնում. «Այս օր էլ Նեստորականների եպիսկոպոսական թեմը... Be Shems ood-Deen կրծատուած Shemishen և Shemdina=Շեմիջնամէի Վիլայետ-i Shems uddinan կոչւում է Ռուստակա»:

1. Ղ. Ինձիճեան, Ստորագր. Հ. Հայաստ. էջ 534—535. Վենետիկ 1822:

2. Բատ մեր ցուցակագրութեան № 20, էջ 252. «Յայլուստ Դուին քաղաքն ի Նախչուանա յարևմտից կողմանէ... Սալմաստ յորմոյ քովիւ Յըռուստա յորմոյ քովիւ է. Շամիրամակերտ Վան է: Սմրզանդ՝ Խորասան: Աճամստան՝ Պարսկաստան: Կողոնք, որ է աղշարն՝ Ամասիոյ քովիւ է: Շիթար քաղաք, որ է Խարբերդ...»: Այս սկսուում է Վարդանայ աշխարհացոյցից յետոյ Նման հատուած Լայ էջ 238, ուր զանազան քաղաքների Դուինից ունեցած հեռաւորութիւնն է ցոյց տուած: Այս ձեռագիրն [ինչպէս և մի ուրիշը Մեսրոպ երէց № 21=1378] յանձնեցի Մ. Աթոռի մատենադարա-նապետ մագիստրոս Մ. եպիսկոպոսին, որ իսկոյն մտցրեց մա-տեան ընդ համարաւ 1379:

3. G. Hoffmann, Auszüge, Excusee § 16, էջ 241.

Արդ պարզ է, թէ al-Rustaq-ը, թէ Շեմս ուղ-Դիբն կամ Շեմդինա և կամ Շեմս ուղգինանը, որ վիլայէթ է կոչում, այժմեան Հեքքիարի սանջակի հարաւային արևելեան Շեմդինան կազան է, Պարսկաստանին սահմանակից, Ուրմիայից 60 հազարամետր հեռու հարաւարևմուտք¹: Բայց որ ալ-Rustaq-ը հնումը կարող էր շատ աւելի ընդարձակ լինել քան այժմեան Շեմդինան կազան, այդ հասկանալի է, որի ապացոյց են նախ այժմեան Ռուստակա եպիսկոպոսական թեմը և ապա անունը: Ռուստակ նշանակում է նախ զի՞դ իւր սահմանով, ապա և քաղաք իւր սահմանով՝ զաւառ². այսպէս Ռուստակ Բազարմա, Ռուստակ ալ-Հարուր, Ռուստակ

1. Vital Cuinet, Türquie d'Asie, էջ 741—745. Paris 1892:

2. G. Hoffmann, Auszüge, Excuse §16, էջ 239:—Երուանդ Տէր-Մինասեանցը հաղորդում է մեզ հետեւեալը. «Payne Smith-ի | ասորի-բէն» բառարանը կրում է. «Ռուստաքա=Dorf, Dörfchen, Distrikt: Տեսնում էք ուրեմն, որ վերջին բացատրութիւնը բոլորովին համապատասխան է Զեք հնթագրութեանը: Իսկ Բրոկլմանի բառարանը նշանակում է Բուստաքայի դիմացը միայն Provincia, որ մինոյնն է, ինչ որ Distrikt»: Այսպէս ուրեմն Ռուստակ-Բուստաքան=զիւդ, զաւառ, նահանդ, անշուշտ և աշխարհ՝ provinca նահանդ նշանակութեամբ: Հ. Հիւրշմանը Ռուստակ անուան ընթերցուածքները մէջ բերելով հարցնում է, թէ արդեօք այդ բառը չէ ծագում պահլաւերէն *rotak³ հին պարսկերէն րաւակ «զիւդ» բառից (Die altarmen. Ortsnamen, էջ 260. ծանօթ. 4): Մենք ձեռնհաս չենք այդ խնդիրը լուծելու, միայն պէտք է զիւրենք, որ հայ ժողովրդի մէջ այսօր Արարատեան դաշտի շատ զիւղերում զաւառ կոչւում է առուի այն տեղը, որտեղից ջուրը բացւում է արտը, ածուներ և մարգեր ջրելու: Այն էլ խնդիր է մնում, թէ արդեօք պահլաւերէն * rotak-ը, որեւէ կապ ունի մեր Ռուստակա-Ռուստակի հետ: Մեր ընկեր Գալուստ Տէր Մկրտչեանը Ռուստակ բառի մասին հետեւեալ ցուցմունքն արաւ: Հոչակաւոր հայագէտ Մաոր «յաջող բացատրութիւն» է տուել այդ մասին իւր 1894 ին տպագրուած «Минное географическое название ростакъ, въ Исторіи Агаѳангела» աշխատութեան մէջ (Գալուստ Տէր-Մկրտչեան, Ազաթանգեղոսի Աղբիւրներից. Յիշտակա Դատակնքաց Գորիա և Շմոնի, էջ 20, Վաղարշապատ 1896). բայց թէ ի՞նչ է, այդ նա չէր յիշում, իսկ զրուածքն էլ դժբախտաբար չկարողացանք այստեղ ճարել: Ապա ն. Աղոնցը հետեւեան է ասում. «Ротак (=rostak) область Саламаса, по Иоанну Кат. էջ

Հաղպատակ և Ռուսակական աշխարհ¹, քոլորն էլ այդ կողմերու մ²:
Հետաքրքրական է, որ Հայոց մէջ էլ Ռուսակը թէ

158, զկողմամբքն Ռոստակայ գաւառին ի Հեր և Սաղամաս³ (Արմենիա և Յուստինիանա, XIX, էջ 335, ծանօթ. 1. Ը. Պետերբուրգ՝ 1908): Նախ պէտք է դիտենք, որ Յովհաննէս պատմազրի Մոսկուայի հրատարակութիւնն ունի «Ռոստկայ», տպա որ Ռոստակը Սալմասաի գաւառը չէ կարող լինել, այդ ընթերցողը կը տեսնի միր առաջ բերած Յայսմաւուրքի վկայութիւնից ես:

1. G. Hoffmann, Auszüge. Excusee § 16, էջ 239:

2. Մեզ թուում է, որ Ռոստակը բառն է Ազաթանգեղոսի ու Կորիւնի հետեւալ երկու ազաւաղեալ բառերը. «Հասանէր և յառաջին դաստակերսն» իւր, յոտտաստակն (Վ. յոռողաստակն, յոռդաստակն, յոռյտաստակն, յըռոտտակն, յըռոտտակն) Այրարատեան գաւառին ի Վաղարշապատ քաղաք» (Էգաթ. Ճի, § 841, էջ 438), «Երթեալ իջանէր առոտս տանն» (Գ. Տէր-Մկրտչեանը § 13 ուղագրում է «առոտստակն») Գողթան՝ յառաջին դաստակերան իւր (Կորիւն, էջ 24, Վենեարիկ 1894), որի հայերէն ձևերը լինելու էին առոտստակ և ոստակ, ինչպէս Արիստակէս, Ռոտակէս, Արիդէս, Ռեդէս, Առոփունիք, Ռոփսեան: Ռոստակը և իւր հայերէն թարգմանութեան գաւառ բառի կրկնութեանը նման այլ օրինակ ևս ունի Ազաթանգեղոսը. «Զեւս գիցն Արամազդայ» (Ճթ, § 785, էջ 409), ինչպէս առհասարակ հայերէն նոյնանիշ բառերինը ևս. «Յարժարական կայտնին, ինմին բազաւորականին ի Վաղարշապատ քաղաքի» (ԺԵ, § 158, էջ 88). «Եկին հասին յերկիր Հայաստան աշխարհիո» (ԺԹ, § 209, էջ 112). «Բղիկեցին Հայոց տաճի Թորզումայ» (ՃԷ, § 776, էջ 403) «Բիւրաւորք ի մէջ Հայաստան աշխարհի տաճի Թորզումայ» (ՃԺԲ, § 796, էջ 415): — Այս բոլորից յետոյ տւելորդ էլ է ասել, որ Ռոտանտակն չէ կարող լինել «հրոյ տան բակն» հիմնուելով «Անանիայ . . . փիլիսոփայի . . . ի սուրբ կաթողիկէ եկեղեցի . . . ի նոր քաղաքի . . .» են ճառի «Հուրբական» բառի վրայ և վերտագրելով այդ Զուարթնոց եկեղեցուն. որովհետեւ այդ յատուկ անուն է, որ պիտի լինի «Հարբազն», պատղաշտական սրբազն հրատներից մէկը: Սհա այդ վկայութիւնը. «Օրհնեամլ ևս տաճար . . . Առտուծոյ կենդանոյ . . . կործանիչ . . . կոտապաշտ տաճարացն մոխրապաշտ և մոխրալից արուեանացն սովորութեանց, զանց առնելով զՄրմզպական և զՎռամական հրապաշտութեանցն հոգեկորոյս տոչորմանցն հրկիզութեանց, և զոր ի մերում Հայաստանիայց ազինս Հուրբական» (Երկու օրինակ «Հարբազք, Ռւղղեցաք ըստ Բառ, անուանեալ Բազնաւ» («Ճռաքաղ» ամսագիր 1859, էջ 360—361. Մոսկուա): Մեզնում արդէն յիշուում են

իրեւ յատուկ գաւառի անուն, թէ յատուկ անուան կից
և թէ նաև հայերէն թարգմանութիւնը՝ գաւառ իրեւ յա-
տուկ անուն զործ են ածուել: Արցախում է «Ծոստակ գա-
ւառն Մեծ կողմանց, ի Զղախեան հովիտն յասպարիսա-
կան դաշտակն առ ափն Տրտուական դետոյն, որ է ի վե-

այդ կրակները. Արմզգականը (Խորեն, Բ, Հի, 158. Վենետիկ 1865: Ասողիկ Բ, թ, 84, Ս.-Պետերբ. 1885, Թ. Արծրունի Բ, ա, 78. Ս.-Պետերբ. 1887) և Վաստականը (Եղիշէ, Գ, 106. Թէոդոսիա 1861: Հմմտ. Մ. Կաղանկայտուացի, Բ, թ, 212, Փարիզ 1860). ուստի
հաւանօրէն վերջինս էլ Խառըն կամ Թառնաբհազն հրատն է (G. Hoffmann, Auszüge, Nachtrag էջ 281—288): Իսկ ամենամեծ սրբա-
զան զրադաշտական կրտակն էր կայծակը կամ կայծակից ծաղած
Գանձակի հրատ-Ադար-ի-ցոս-ասր-ը, մեր «Հրատ մեծ Վշնասպ»ը
(Ասողիկ Բ, գ, 115. Աերէոս Գ, իզ, 22: Հմմտ. Թ. Արծրունի, Բ,
գ, 92): Այս հրատն էր, որ թուաւ կայ Խոսրովի ձիու վերայ (G.
Hoffmann, Excuse § 17, էջ 251 հմմտ. Th. Nöldeke Tobari, էջ 110,
ծանօթ. 3. Gusnasp. Leyden 1879), որ մեր ժողովրդին ևս անյայտ
չպիտի լինէր: Այս են ցոյց տալիս գոնեա մեր հեքաթների ծովե-
րում առզրող, բայց նրելին ձիերը, ինչպէս և «Թուր Կէծակին» և
Քուոկիկ Զալալու ծագումը: Եւ մեզ թուում է, որ Արար-ի-զու-
ռասպն մեր Քաջանց տան՝ Արշակունիաց վէպում «Թուր Կէծակի»ի
հետ յիշուած «Բող ձին Արակին» է: Այս երկում է և հետեւալից:
Յազկերտ Ա. Զարի որդի Վահրամ=Վուամ Գոոր հարիւր ձիուց
ընտրում է մի աշխէտ՝ շիկազոյն ձի և մի շառատ՝ թխակարմիր
ձի. Bahram reçut... ces deux chevaux brillants comme Adergouschasp» (Abou'lkasim Firdousi, Le livre des Rois, traduit et commenté par Jules Mohl, publié par M-me Mohl, tome V, էջ 404, Paris MDCCC LXXVII
=1877): Եւ ըստ Զոջանց տան Սասմայ ծոերի Հայոց թագաւորի
աղջիկը կին է դառնում Աշմառ՝ Պարսից թագաւորի տղային և Կա-
պոտ ծովի ջրով յղանում, որի որդիքը Սանասար և Բազտասար
Կապոտ ծովու կղզուց են հանում «Թուր Կէծակին» և «Քուոկու
Զալալին» (Առ. Կանայեանց, Զոջանց տան կամ Սասմայ ծոեր
վէպի երեք փոփոխակ, էջ 103—106, § 1—27. Վաղարշապատ
1910. Արտասապ. Արտաստ Ամսագրից): Արդ Կապոտ ծովն է մեր
Կապուտանը, այսինքն Արմիոյ լիճը. իսկ Գանձակը գտնւում
էր այս ծովից հարաւ արևելք Cecast լճակի ափին, այսօրուայ
Թախտ-ի Սուլայմանի մօտ Vera կամ Փրչաչոյ բերդով, որ կոչ-
ում է և Որչաչոյ=հին պարսկերէն* Ֆրադահ-ասպա՝ «Աժոյզիր
յառաջացնող», (J. Marquart. Etausahr էջ 108):

ճակին Մեծ Իրանց»¹. այլև Ուտի-Ռուստակ և Սիսական Ռուստակ². իսկ վերեն էլ երկար ծանօթութեամբ մենք տեսանք Առոտստակ Դողթան և Ռուստակ Այրարատեան գաւառ, ուրեմն և հայերէն թարգմանութեամբ միասին կրկնուած: Մեծ կողմանց Ռուստակ գաւառից արևմտեան հիւսիս՝ Արցախին սահմանակից Սիւնեաց Գեղարքունիք, այժմեան Նոր-Բայազիդի գաւառը ևս տեղացիներից և շրջակայքում կոչւում է Քեաւառ³, որ ի հարկէ գաւառ

1. Մ. Կաղանկայտուացի Ա. հատոր, Բ, իթ, էջ 329 Փարիզ 1860: Միւս տպագրութիւնն ունի. «Ըստուտակ գաւառն Մեծկողմանց . . . յԱպարհստական դաշտակն . . . ի վիճակին Մեծիրանաց» (Բ, իթ, 163, Մոսկուա):

2. ԽԱՎ, էջ 606 ծանօթ. 4, և 609: Marquart Eransahr էջ 120—121, ծանօթ. 2—3, Ուտուտտակ=Ուտի-Ռուստակ, իսկ «Սիսական Ռուսան»=Սիսական-Ռուստակ. որ գժուար թէ Մեծիրանքի Ռուստակը լինի. որովհետեւ «Սիս. ոստանը»=Սիսական ի Կոտակ, որ չէ փոքր Սիւնիքը (Ա. Häbschmann, Ortsnamen, էջ 349—350 և 267):

3. Վանայ վիլայէթի Հեկքեարի սանջակի Գեւառ կազայի սահմանակից Զուլամերկ կազային սահմանակից է Նորդուզ կազան (V. Cunet, Turquie d'Asie, II, քարտէզ և էջ 747), իսկ Նոր-Բայազիդի մօտ է Նորդուզ գիւղը: Այս հանդիպումը հաւանօրէն պատահական է, քանի որ Նոր-Բայազիդ-Գաւառի բնակիչները գաղթել են Հին Բայազիդից, որքան մեզ է յայտնի 1830 թուականին (И. Шопенъ, Историч. Памятникъ состоянія Армянской Области къ эпоху ея присоединенія къ Росс.—Имперіи часть I, глава IV, էջ 315. С.-Петерб. 1852), մանաւանդ Սիւնեաց այս գիւղը յիշուում է Ժ. դարում «Նորատուն» անունով (Յովհ. կաթուղ. Պատմ. Հայոց էջ 163 Մոսկուա 1853. ԾՂ, 376. Երդւսաղէմ 1867). և միայն յետոյ «Նորատուս» (Ստ. Օրբէլիան, Պատմ. նահանգ. Սիսական Լի, էջ 181, Լի, 194. ԾՂ, 298. Թիֆլիս 1911): Եւ ուրեմն ինքն ըստինքեան հասկանալի է, որ Նոր-Բայազիդ-Քեաւառ անունը հազիւ թէ իւր անունն ստացած լինի Ռոստակ-Գաւառից, մանաւանդ որ Նոր-Բայազիդը «Գաւառ» կոչուել է Տաճկանայոց գաղթականութիւնից դարեր առաջ 1752—1842 կոնդակներում, արձանագրութիւններում և յիշատակարաններում (Մեսրով արքեպիսկոպոս Ամբատեանց, Գեղարքունի ծովազարդ գաւառ, Ա, էջ 58, Զ, էջ 442, 448, Է, էջ 492. Լ, էջ 642—643 Վազարշապատ 1895), ինչպէս և այսօր տեղական և շրջակարան բնակիչներից ոչ միայն Նոր-Բայազիդի գաւառը, այլ և քաղաքը կոչում է «Քեաւառ»:

բառն է, յատուկ անուն դարձած:

Արդ սոյն երկոյթը տեսնում ենք և Ասորեստանի սահմանակից Հայաստանի հարաւում: «Սասունցիներն իրանց երկիրն անուանում են Գաւառ¹, որ թերեւ հնագոյն ժողովրդական կոչումն է, քանի որ Սասունը՝ Դաւառ կոչուած է և Զոջանց առն կամ Սասմայ ծոեր ժողովրդական վեպում²: Բայց և վանայ կողմերից մեր կողմերն եկող տաճկահայ զիւղացիներից յաճախ կը լոեք Քեաւառ Երկրի անունը, որ ի հարկէ չէ Գաւառ-Սասունը, այլ այժմեան վանայ վիլայէթի Հաքքիալի կամ Հեքքիարի սահմանակից, որ կոչուած է Ghéver-Գեւէռ³, մինչդեռ այս երկուսը՝ Ռոստակ-Շեմղինանը և Ghéver-ը Կիպերտի քարտէզում մի քաղաքական ամրողութիւն են կազմում Guiavar-Գեաւառ անունով⁴: Յիշենք և միւրիշ վկայութիւն, որ մեզ ուրիշ պատճառներով ևս պէտք է: «Ռումիայից բարձրանում են լեռները դէպի արևմուտք մինչև Gavar⁵: Գեաւառից

1. Ա. Քալանթար, Սասուն I, էջ 7, Թիֆլիս 1895: «Սասուն կոչի նաև Գաւառ» (Ղ. Ինճիճեան, Աշխարհագրութիւն Զորից Մասնց աշխարհի, մասն Ա. Ասիա, հատոր Ա. էջ 200. Վենետիկ 1806):

2. Կ. Ռ. Ռատկանովъ, Материалы Армянскихъ Нарѣчий, выпускъ Мушскій Дialectъ. Գ. Սրուանձտեանցի. Սասունցի Դաւառի կամ Մհերի Դուռ, Գ. էջ 13. С.-Петербург. 1875:— Բազեշում գրուած ս. էջմիածնի մատենադարանի Գէորգեան ցուցակ № 611 ձեռազրի զրիչ «Պօղոս երեց Գաւառոցին» (Ազաթանգ. յառաջարան, էջ Ժ՞ր, § 8) անտարակոյս Սասունցի է և կամ Ռոստակ-Գեաւառոցի:

3. V. Cuinet, II, էջ 737 22. որ կոչուած է և Ghevaz?)=Ghevar?

4. Carte Générale des provinces Européennes et Asiatique de l'Empire Ottoman (sans l'Arabie dressée par H. Kiepert. Berlin, Dietrich Reimer 1886:

5. Ghever-Guiavar-Gavar ը չպէտք է շփոթել Վանայ վիլայէթի վան սանջակի կարճկան կազայի Ghevar նահիէի հետ (V. Cuinet, II, էջ 702): Գուցէ թէ իրօք Գաւառը մի ժամանակ այդքան հեռու էր տարածւում, թէ այդ էլ մի այլ չորրորդ Գաւառ տնտեսով գաւառ է եղել, որից մնացել միայն մի նահիէ: Այս է երեխ Բոհտանի համանուն գիւղով նահիէն (Martin Hartmann, Bohtan, 52, էջ 21, Berlin), որ կոչում է և Qamzi (Անդ, 154, էջ 47):

միօրուայ ճանապարհ մինչեւ Քանզիլ լեռներից արևմուտք
Շուտութա զիւղը . . . հարաւում Զելու և Բագ լեռնես
ըլ . . . Քոճանէսից մի ճանապարհ մինչեւ ճաշ տանում է
մինչեւ Քոճանէսից արևմուտք գտնուած Բերձելլէն լեռը . . .
և այն կողմը հովտում գտնուում է Զուլամարկ կամ Զու-
լամարչ¹:

Այս բոլորից յետոյ պարզ է, նախ որ մեր զանազան
ընթերցուածներից Ոռոտակ կամ Ոռուատակ ձեն է ուղա-
ղագոյնը, որ նշանակում է գաւառ, որից ծագել է և մեր
Գաւառ կամ ժողովրդական Գեաւառ-Քեաւառը, քայց ժա-
մանակի բանիմաց և զիտուն պատմագիրները արհամար-
չել են այդ և գերազանցել են օտար կոչումը. և ապա որ
սորական Շեմզինան-Ոռոտակը և Հայոց Գաւառը միև-
նոյնն են:

Ոռոտակ բառը թէև պարսկերէն է երեսում, բայց թէ-
րես այդ ինչպէս և հայերէն թարգմանութիւն Գաւառը
իբրև յատուկ անուն անցել է մեզնում ասորական ազգե-
ցութեամբ, եթէ ի նկատի առնենք թէ Հայաստանի այն
մասերումն են զործածւում ուր ասորական ազգեցութիւնը
կամ ենթազրւում է և կամ հաւասար է: Այսպէս ասո-
րական կուլտուրական ազգեցութիւնը հիւսիսային արևե-
լեան Հայաստանում գիտել են Ակօսյերը և Մորդանը, յատ-
կապէս Ղարաբաղում՝ Արցախում . . . և Սիւնիքում Երասխի
և Կուրի միջեւ². իսկ հարաւում արդէն յայտնի է Խալ-
զիական կամ այսպէս կոչուած Հայկազանց շրջանի սկրզբ-
ներում և քրիստոնէութեան շրջանում մինչեւ և. դար:
Վերջին վկայաւթեան մէջ յիշուած Բազը, որ Մարշիմա-
նին ենթարկուած մի ցեղի անուն է, մեզ յիշեցնում է
Հայկի թոռ Բազն ու Բզնունիք անունները: Այս վերջինին
են մօտեցնում Տկլատ-Պալասար Բ-ի (744—726) Արար-
տացւոյ Ուլուրայ գաւառում շինած Ասսուր-Բազայ քա-

1. G. Hoffmann, Auszüge, Excuse § 15, Էջ 230:

2. Ազգազրական Համելէս Ա, Էջ 39, հմմտ. Էջ 108 22. Շուշի

ղաքի¹ և վանայ ծովի ափին այժմ գտնուած Բազ զիւղի
և նոյն խոկ Վարդան պատմագրից «Պուգարքի ծաշիրք զա-
ւառում յիշուած Բազկերտ բերդի անունը և Օրբէլեանի
յիշուած Բզին զաւառն ու բերդը²: Գ. Տէր-Մկրտչեանը
նոյն «ցեղակցութիւն» է գտնում հիւսիսային Ռւտեացւոց և
հարաւային Ռւտայեցւոց, այն է Աղձնիքի Նփրկերտ զաւառի.
միջե³, թէ և այստեղ Ռւտայեցիք են իսկապէս: Յիշենք և
Կորճայքի Ռսիրանքն ու Արցախի Մեծ իրանքը. հարա-
ւում Նոր-Եիրական կամ Նոր-Եիրական [այժմ Եիրուան]
և հիւսիսում՝ Արարատում Եիրակ, ինչպէս և Վրաս-
տանում: Վարաժնունիք դաւառ Վասպուրականում: Տու-
րուբերանում և Արարատում⁴: Յայտնի է և Արարատի
Արագածոտն զաւառի Օշական զիւղը, բայց կայ և «Օշական
դաշտ ի Մանազաւեան [Մանաւազեան] սահանդին»⁵: Պէտք է
չմոռանալ մի հանգամանք ևս, որ Խորենացին հարաւային
Կադմեան, հաւանօրէն սեմական, ցեղը կապում է հիւսի-
սային՝ Սիսական ցեղի հետ իրեւ Հայերի: Այլ և ինկատի
առնելով նախընթաց դիխում առաջըերած Արարադ և Այ-
րարատ աշխարհների և իրանց մի քանի անունների և ա-
ւանդութեանց նոյնութիւնն ու նմանութիւնը, կարելի էր
կարծել, որ հիւսիսային Ծովդեացիք, որ Աղուանից Ռոստա-
կին սահմանակից են և որից շատ հեռու չպիտի լինին Գեա-
ւառ-Նոր-Բայազիդը, որ և է առընչութիւն ունին հարա-
ւային Ծաւդեացոց հետ, որին շատ մօտ էր, եթէ ոչ սահ-
մանակից, Ռոստակ-Եամդինանը՝ Ռոստակ-Գեաւառը. որով-
հետեւ այսքան պատահական նմանութիւններ զժուար է
ենթագրել: Եւ արդեօք միւս կողմից այս կապակցութեան
հեռաւոր արձագանքը չէ Ռշտունեաց Սիսականից զաղթա-

1. Կ. Պատկանով. Վանքի Թագուցի IV, 146.

2. Թր. Խալաթեանց, Հ. Հայաստանի մի քանի աշխարհա-
գրական անունների մասին, Բանասէր 1900, էջ 285—286. Պարիս:

3. Միարան, Ռւրարտեան բնեուազրերի լեզուն, Արարատ
Ամսագիր 1893, էջ 932—933. Վազարշապատ:

4. H. Hübschmann, Ortsnamen № 105, 37, 188:

5. Թ. Արծրունի, Գ. Իլ, 246:

կան լինելուն, երբ Խորենացին շնայելով իւր վերնագրին շարունակում է պատմել հայ նախարարութեանց ծաղումը, թուելով հիւսիսից Սիսական գունդ՝ Աղուանքը և Գուգարք, իջնում է հարաւ և յիշում է Ծոփաց, Բզնունեաց ևն, Մոկաց, Կորդուաց, Անձեացեաց և Ակեացոց ծաղումը և անմիջապէս յարում է. «իսկ զիշտունիս և զԴողթնեցիս գտի պատմեալ ի սիսականէն արդարե հատուած. ոչ գիտեմ, թէ յանուն արանցն զգաւառն անուանեն, և թէ (=եթէ) յանուն գաւառացն զնախարարութիւննն կոչեցեալ»¹:

Ռոստակ-Գաւառուը չէ յիշում Խորենացու աշխարհագրութեան մէջ, ուստի կարելի էր կարծել, որ այդ ասուրական է, և հայ եպիսկոպոսներն իսկապէս Ասորւոց ժողովրդի հովիւ են եղել, ինչպէս Զ. դարու վերջին Հայոց և Ասորւոց եկեղեցու սերտ յարաբերութեան ժամանակ եղեսիոյ «ուղղափառների» եպիսկոպոսը «հայ» է կոչում², Բայց այս սակաւ ինչ անհաւանական է այն պատճառաւ, որ ե. դարում իրար ետելից այդ վիճակի երեք հայ եպիսկոպոս են յիշում. մանաւանդ որ Հայոց եկեղեցու մերձաւոր և բարեկամական յարաբերութիւնները եղել են Սևերեան և Յակոբիկ ասորիների հետ, որ Հայաստանի հարաւային արևմտեան կողմերումն են գտնւում³. մինչ-

1. Խորեն. Բ, Ը, էջ 80. Հմմտ. Ա, ԺԲ, 28:

2. Erwand Ter-Minassiantz. Die Armenische Kirche in ihren Beziehungen zu den Syrinen Kirchen bis zum Ende des 13. Jahrhunderts nach den Armen. und Syrischen Quellen, II, էջ 59. Leipzig 1904: Առյնը աւելի ընդարձակ և հայերէն. Հայոց եկեղեցու յարաբերութիւնները Ասորւոց եկեղեցիների հետ. Հայկական և Ասորական աղբիւրների համաձայն, ուսումնասիրեց Երուանդի վ. Տէր-Մինասիանց, լիցինցիատ աստուածաբանութեան և գոկտոր Փիլիսոփայութեան. Բ, էջ 235. Ա. էջմիածին 1908:

3. Յակոբիկ Ասորւոց յարաբերութիւնները Հայոց եկեղեցու հետ շարունակուել է ժԴ. դարուց յետոյ ևս մինչև մեր օրերը Տակաւին Երուսաղէմում Յակոբիկները Երուսաղէմի Հայոց պատրիարքին են ենթարկուած. իսկ նոցա պատրիարքը Տաճկահայոց Կ. Պոլսի պատրիարքի միջոցով էր միայն հաստատում և յարա-

զեռ այդ արևելեան կողմերում Նեստորական առարիներ են ապրում դարերից ի վեր. ուստի կը մնայ ենթագրել, թէ Հայերն այդ դաւառում է. և թ. դարերում այնքան շատացել ենր որ առանձին եպիսկոպոսութիւն են հաստատել, թէև այժմ այնտեղ շատ քիչ հայ կայ:

բերութիւններ ունենում Բարձրագոյն Դուռն հետ Բ. Դուռը 1873 թուականի յունիսին թեսկերէ է գրում Կ. Պոլսի Հայոց պատրիարքին, որ Ասորւց Դիարբեքիրի պատրիարքի հրովարտակում չյիշուի Հայոց պատրիարքի իրաւասութեան ենթարկուած, քանի որ կայսերական դիւանատան հրովարտակներում այդ պարբերութիւնը զանազան ձևով է յիշուած և աւելի հներում չկայ. ուստի, ասուած է, մենք արգելք չենք գտնում Ասորոց պատրիարքի խնդիրը կատարելու, այսու համգերձ ձեր ուսումնասիրութեան ենք յանձնում և ձեր կարծիքն ենք խնդրում: Պատրիարքը պատասխանում է թաքրիրով, թէ յիշեալ եպիսկոպոսը իւր պատրիարքութեան բարձրանալն իմացնելով նամակներով և հեռագրերով նոյն գիմունն արել է և Հայոց պատրիարքարանին: Միւս կողմից Դիարբեքիրի ասորի ազգարնակութեան և հոգիորականութեան կողմից հեռագրով մեր պատրիարքարանին բողոքել են նորա դէմ...: Մենք էլ ինդիրել էինք Բ. Դունից մինչև Երուսաղէմից տեղեկութիւն ուտանալը գործին ընթացք չտրուի: Մեր պատրիարքարանը կարծում է, թէ Բ. Դուռն առայժմ հրովարտակը պիտի չտայ: Գալով մեր գերիշխանութեան իրաւասութիւնը չընդունելու խնդրին, եթէ ամբողջ ասորի ազգը համամիտ է այդ բանին, մենք կը պատասխանենք, թէ Երուսաղէմում և թէ այլ տեղեր ի հնուց անտի մեր ազգին սեփական եկեղեցիների և ուխտավայրերի մէջ ասորի ազգը հոգևոր պաշտամունք է կատարում մեր թոյլատութեամբ այն պատճառով, որ այդ ազգը մեր գերիշխանութեան ներքոյ է (Համարատութիւն Ազգ. կենդրոն. Վարչութեան առ Ազգ. Ընդհ. Փողով 1872—1873, Բ. մաս, էջ 69—70): Այսուհետեւ «Ասորւց կաթուղիկոս Պատրոս եպիսկոպոսը» ներկայանում է Հայոց ազգային խանչ՝ կրօնական և քաղաքական ժողովին բացատրութեան, որի պահանջմամբ գրով ինդրում է մեր պատրիարքարանից, որ ըստ նին սովորութեան թաքրիր և ա. կարգի մեջիտիէ ստացուի և յանձուի (Համարատութիւն Ազգ. կենդրոն. Վարչութեան 1873—1874 ամի, էջ 17—18. Կ. Պոլս 1876): Սուլթան Համիդ Բ.-ի թագաւորութեան հայահալած շրջանում Ասորիները հասան իրենց նպատակին:

Այն ենթադրութիւնը, թէ Ասորիների կախումը Տաճկանյաց պատրիարքից չէ ծագում հնագոյն յարաբերութիւններից,

Միւս կողմից հնարաւոր է, որ այդ գաւառը մի այլ անուն էր կրում և կամ մի այլ գաւառի մասն էր։ Մենք արդեն տեսանք, որ Ռոստակ-Գետառը և Ռոստակ-Շիմ-զինանը համարեա թէ միենցնն են, մինը հաւանօրէն աւելի հայկական և միւսն առօրական, իսկ ոսցա սահմանակից էր Մարգաւառը։ Մարաց գաւառ։ Եւ Յայսմաւուրքը հաւանօրէն այս է ախնարկում երբ Շմաւոն-Սիմոնի մասին ասում է, «Քարոզեաց . . . և ի գաւառու հայոց և մարաց և ասորոց, և կատարեցաւ յիռուսթաւայ»։ Եւ որովհետեւ Մարաց գաւառը պէտք է տարածուած լինէր, եթէ ոչ մինչև Վասպուրականի Մեծ Աղբակը, զէթ մինչև Կորճէից Փոքր Աղբակը, իսկ Դեւէո կազային հիւսիսից սահմանակից է Էլբակ կազան¹, այսինքն Մեծ Աղբակը, և արևմուտքից Զուլամերիկ կազան, այսինքն Փոքր Աղբակը, ուստի Ռոստակ-Գաւառը կարող էր Վասպուրականի և Կորճէից գաւառ լինել բայց զուցէ և Պարսկահայքի, մանաւանդ որ «Խառն զրակցութեամբ սահմանին առ միմեանս Փոքր Աղբակ և աշխարհն իորճէից և Պարսկահայոց»²։ Սակայն ի նկատի ունենալով՝ որ գաւառներն երեխ կունենային ընդհանրապէս բնական սահմաններ, իսկ Ռոստակ-Գաւառն այսօր էլ

այլ սուլթան Մահմէդ Բ. Յաղթողի հրովարտակից, հիմնաւոր չէ։ Որովհետեւ, թէև այդ հրովարտակի բնագիրը, ինչպէս և Յունացը, կորած է, անգամ յետագայ հրովարտակներում և ոչ մի հետք կայ այդ մասին։ Հայոց պատրիարքի տիտղոսն է. «Կ. Պոլսոյ և շրջակայից Հայոց պատրիարք Մկրտիչ եպիսկոպոս հրաժեշտ տուած լինելով . . . հրամայեցի որ յիշեալ Վարժապետեան Ներսէս եպիսկոպոս կ. Պոլսոյ և Անատոլուի և Բումէլիի և շրջակայից Հայոց պատրիարքութեան պաշտօնը վարէ» (Արձանագր. Աղք. Ժողովոյ 1874 ամի, ԺԲ. 17 յունուարի 1875, էջ 163—163. Կ. Պոլիս 1875)։ Այս էլ ճիշտ միենոյն տիտղոսն է, ինչ որ Յովհաննէս և Ստեփան պատրիարքներինը 1799 և 1869 թուերին տուած (Աւետիս վարժապետ Պէրպէրեան, Պատմ. Հայոց, ԽԲ, էջ 222—233. Կ. Պոլիս 1871)։ Աղքային ժողովի արձանագրութեանց ցուցմունքներն ստացայ հանգուցեալ Մատթէոս Բ. Հայրապետից։

1. V. Cunet, II էջ 731 շ. և քարտէզը։

2. Թ. Արծր. Գ, ԽԹ, 259։

Պարսկաստանից բաժանւում է լեռներով, պետք է վերջինս անհաւանական համարել բայց յամենայն դեպս Ռոստակի երբեք չէր կարող Պարսկահայքի հիւսիսում ընկնել:

Ռոստակ գաւառը կարելի է որ հնումը Փոքր Աղբակի մասը համարուած լինի. եթէ ի նկատի առնենք և այն հանգամանքը, որ Ռոստակ յիշող պատմազրելից Դեռնդը ամենեին չէ յիշում Աղբակը, մինչդեռ թ. Արծրունին, որ այնքան յաճախ յիշում է Արծրունիներին պատկանեալ գաւառնելը անուն անուն, և լաւ զանազանում է Աղբակ-Մեծ Աղբակը Փոքր Աղբակից, բնաւ չէ յիշում Ռոստակը. իսկ Յովհաննէս կաթուղիկոսը թէե յիշում է երկիցու և «Աղբակը» (ՅՊԵԲ, իԴ, 156. կդ, 411; ՅՊՄ, 69, 178). բայց սա էլ անշուշտ ինչպէս և թ. Արծրունին միայն «Աղբագ» ասելով՝ հասկանում են Մեծ Աղբակը, թէե վերջինս ունի և «Մեծ Աղբագ» կոչումը (Ortsnamen, էջ 344, § 89).

Ա. Կանայեանց